65. Մեծ զավթի մուտքի կողքին, հս կողմում, դեպի աե նայող պատին, դրսից

(Լուս. № 52)

ԺԵ դարի կեսերը, հավանաբար 1652 թ.

Հրատարակվում է առաջին անգամ

1 Աշ ողորմի Սարգիս եպ[իս]
2 կոպոսին եւ ուստայ Սարգ[սին]
3 եւ աշակերտաց նորայ՝
4 Հէրապետին, Դաւթին, Յէսու[ին],
5 Կարապետին։ Յիշեցէք ի [ար]։

Նկ. 52. Արձ. № 62։

Մանրություն.— 1. Այստեղ հիշատակված ուստա Սարգիսն իր աշակերտների հետ միասին մեծ նորոգություններ է կատարել Ամենափրկչի, Աստվածածնա, ս. Գրիգոր բոլորակ եկեղեցիների, նշխարախցի (գրատան) և զանգակատան վրա։

2. Թվականը որոշել ենք նորոգումների ավարտմանը վերաբերող մի այլ արձանագրության մեջ (№ 14)։

66. Մեծ զավթի հս պատին դրսից

Մ 1815

Հրատարակվում է առաջին անգամ

1 Կամաւն Այ ամենակալին, մեք՝ իշխանք հայոց Սօլման
2 հազարապետս եւ Զաքարէս, յազգէ Արղութեանց, վերատին նոր-
3 ոգեցաք զԱմենափրկիչ եկեղեցին եւ զզանգակատունն իսկակ-
4 ան արդեամբք մերովք. յիշեցէք ի Քս։ 1815։

67. Մեծ ժամատան աե պատի տակ դրած խաչքարի վրա

ԺԳ դարի 20-ական թվերին

Հրատարակված է՝ Հար 281, Լալ 382

1 Ես՝ Դաւիթ իշխանաց իշխան, կանգնեցի զսբ նշա[նս ի վերայ]
2 զերեզմանի հաւր իմոյ Գրիգորի։ Որք երկրպագեք յաղաւթս յիշեցէք։

Մանրություն.— Գարեգին արքեպ. Հովսեփյանը (տես նրա «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Ա, Երուսաղեմ, 1935, էջ 32) այն կարծիքն է հայտնել, որ այս Դավիթը և № 15 արձանագրության մեջ հիշատակվող Շոթոռկի որդի Դավիթը միևնույն անձն են։